

քան սահմանափակ մտքի տէր մարդիկ են եղել՝ թէ դարձեալ մի գաղտնի «և» կայ այդտեղ:

5. Աղէքսանդրապօլից Ղանլիճա, ուղեորի յիշողութիւններից. գրեց Ն. Ք. Նի-
զՊՂՍՍԵԱՆ: Ալեքսանդրապօլ. 1905. էջ 62.

Մեր նորագոյն գրականութեան 70—80 տկան թուականներին շրջաններում բաւականին խոշոր տեղ էին բռնում ճանապարհորդական լուրջ նկարագրութիւնները, որտեղ դիւրամատչելի ձևով նկարագրում էին տեղագրական կամ ազգագրական նիւթերը և օգտակարն ու գուարճալին շատ անգամ միանալով՝ շարժում էին ընթերցողների հետաքրքրութիւնը: Վերջին ժամանակներս ազգագրական ու տեղագրական նիւթերը մեծ մասամբ իբրև գիտական մշակման առարկայ նկատուելով հրատարակում են չոր ու ցամաք, համակարգուած կամ առանց համակարգութեան և այդպիսով սակաւաթիւ անձանց հետաքրքրութեանը բաւականութիւն տալիս:

«Աղէքսանդրապօլից Ղանլիճա» գրքոյկը ձեռքս առնելով սպասում էի թէ կկարդամ մի ճանապարհորդական նկարագրութիւն—մանաւանդ որ գրքոյկի ճակատին էլ դրօշմուած է «Ուղեւորի յիշողութիւններից»։ բայց իրքան եղաւ հիասթափութիւնս, երբ գիրքը ծայրէծայր կարդալով միայն գտայ մի մասլահաթ, որ տեղի է ունեցել ճանապարհին հեղինակ քահանայի և մի տիրացու Գալուստի մէջ: Այսպիսի ամեն տեսակ դատողութիւններով խճողուած գրուցատրութեան համար ի դուր է հեղինակը ուղքով Ղանլիճա գնացել. նա կարող էր տիրացու Գալուստին իւր տուն հրաւիրել և հանգիստ նշատած մասլահաթ անել... Այդ դէպքում գոնէ գրքոյկի վերնագիրը կհամապատասխանէր բովանդակութեանը:

Ճանապարհորդ քահանան հանդիպելով տիրացու Գալուստին՝ ոչ թէ միայն նրա որտեղացի լինելն ու անունն է հարցնում, այլև ասիական հետաքրքրութեամբ՝ թէ խուրջինի մէջ ի՞նչ ունի, թէ արդեօք նազդ փողով է գնել, թէ ապառիկ և այլն: Այնուհետև սկսում է մասլահաթը՝ ապառիկների, մուհակի, վաճառականների ու գիւղացիների փոխադարձ անբարեխղճութեան, ագիտութեան, ուսումնարանի, լրագրի, գրքերի, բժշկի, երազի ճշտութեան, գանձ փորելու մասին և այլն, յետոյ ճանապարհին պատահում են հովիւ Հասօին և նրա հետ սկսում մասլահաթն ու լսում են նրա սրնգի հնչիւնները. վերջապէս հասնում են գիւղ և ապշած ընթերցողին հեղինակը կերպ-

կրում է գրքոյկի վերջին տողերին կցած հետեւեալ ծանօթութեամբ. «Ղանլիճանների նկարագրութիւնը իրանց ներկայ և անցիակ տեսակետներով (?), կարելի է գտնել 1904 թ. Արաբատի մէջ»:

Միթէ արժէր այս երկու տող յայտարարութեան համար 62 էջ լցրած մասլահաթներով զբաղեցնել ընթերցողին:

ԲՐԻՉ

Ստացուած գրքեր

- Մ. Շուրեան. Գ. Խալաթեանցի «Հայոց Արշակունիք Մ. Խորենացու հայոց պատմ. մէջ». մատեն. Վենետիկ. 1904 Միք. Մանուէլեան. Էսքիզներ. Մ. Պ. Բ. 1905. գ. 40 կ.
 Ն. Փրանգեան. Ատրպատական. պատկերազարդ. Թիֆլիս 1905. գ. 1 ա. 50 կ.
 Փառնակէս. Կը կակղես կուտես. վօդ. մէկ ար. Երևան 1905 գ. 40 կ.
 Բժ. Վ. Արծրունի. Մանկիկ. նկարներով. Թիֆլիս 1905. գ. 40 կ.
 Մօրիս Լըմբրսիէ. Մարդ. Թարգմ. Մ. Վ. Բագու. 1905. գ. 5 կ.
 Արսէն աւ. ք. Բագրատունի. Ձեռնարկ կրօնական գիտելիքների. գ. տ. Թիֆլիս 1905. գ. 40 կ.
 Դաբրիէլ Սունդուկեանց. Ամուսիններ. կատակ չորս արարուածով. երրորդ տպագրութիւն. ուղղած. Թիֆլիս 1905 (1 ա).
 Մ. Շուտ. Սև հարսանիք. Ռուսոնուք 1905 (10 կ.)
 » Դատ. կրիտիքական անալիզ. Ռուսոնուք 1905 (10 կ.).
 Նշտար. Ժահրոտ վէրքեր. արտ. Տարազից. Թիֆլիս 1905 (15 կ.).
 Մ. Սեմենկա. Առաջին վաստակ. զրոյց. փոխադրեց Լ. Մ.—Ադամեանց. Թիֆլիս 1905 (60 կ.).
 Կօտ Մուլիկա. Փոքրիկ ծուկ ու խլըշիկ նապաստակը. փոխադրեց Նոյն. Թիֆլիս 1905 (1 ա).
 Վիկտօրիէն Սարդու. Ոգեհարցութիւն. Թատր. 3 ար. Թարգմ. Նոյն. Թիֆլիս 1905 (50 կ.).
 Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը. հրատարակեաց Յարութիւն Գրիստափօրեանի ի յիշատակ իւր կողակից Իսկուհի Գրիստափօրեանի դստեր Յարութիւնի Ունճեան, որ անցեալ տարի վախճ. Տփլիսուս Թիֆլիս 1905:
 Խաչատուր արեղաի Զուղայեցւոյ Պատմութիւն Պարսից (ժը. դար). աշխ. Բարգէն վ. Աղաւելեանց. Վաղարշապատ 1905 (1 ա. 25 կ.).
 Գ. Զուբար. Մահտեսի Սարգիս. գիրք Ա. Նոր-Նախիջևան 1905